



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 281

ք.Արտաշատ

13 11 2018թ.

ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ/ ԹԱՓՈՒՐ
ՄԱՑԱԾ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման» կարգով.

- 02-001 «Արտաշատ-Արարատ», 02-004 «Արտաշատ-Մասիս», 02-005 «Արտաշատ-Քաղցրաշեն-Նարեկ», 02-009 «Արտաշատ-Գետազատ», 02-011 «Արտաշատ-Լանջազատ-Բարձրաշեն» ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը մինչև 2019թ. հունիսի 7-ը ժամանակավորապես հատկացնել «Արտաշատի ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
- 02-015 «Վեդի-Արարատ», 02-018 «Վեդի-Ուրցաձոր-Շաղափ», 02-022 «Արարատ-Երասխ» ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը մինչև 2019թ. հունիսի 7-ը ժամանակավորապես հատկացնել «Վեդու ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
- 02-029 «Մասիս-Նոր Խարբերդ» միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2019թ. հունիսի 7-ը ժամանակավորապես հատկացնել «Լիզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
- Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Գ. Մուրադյանի վրա:

13.11.2018

X

VERIFIED OCSP 13.11.2018 17:10:24 GMT+4